


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 12 ֆր.
 սահմանային 6 »
 Արսասահմանի
 համար սահմանային 15 »
 սահմանային 8 »
 Անկերիկայի համար
 սահմանային 3 ֆր.
 սահմանային 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. երեսին առաջին սահմանային համար 20 0/0 քիչ կը լայն:

Վառակայի համար
 10 սանթիմ.



W. 4.
 Mschitharistengasse
 (Autriche)

Կի կի ցրամ որկնի
 գրուիման հաս.

Редакция на вѣстникѣ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Char cum“
 (Bu garie) Yarna

Պուշկարիոյ համար
 15 ՄԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
 20 ՄԱՆԹԻՄ

Վառակայի համար
 10 սանթիմ.

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆՆԵՐ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԵՐ ԵՒ ՇԱՐԱՍՓՈՐԵՐ

ՇՈՐՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԼՏԻ Ե ԿԱՆԿԻՎ ԿԱՍՐԵ

ՕՐԷՆՔ ԵՒ ՕՐԻՆԱՍԶՆՅՈՒԹԻՒՆ

Բ.

Նախորդ յօդուածով մենք պարզեցինք այն իրականութիւնը որ օրէնքները հնանալով, չը համապատասխանելով ժամանակի պահանջներին և ըմբռնումներին շնչովում են մասնաշաղկապան օրինականացութիւնների հետեւանքով: Այսօր էլ նոր քան մեր ասածը պատմականօրէն փաստելու ուղում ենք պարզել որ յաճախ էլ օրէնքները կազմված են լինում զուտ յառաջդիմական ոգով, սակայն նրանք մեռած տառ են համարվում հէնց օրէնքների ճիշդ գործադրումի վրայ հսկողների՝ այսինքն պետական կամ ընկերական հաստատութեան վարիչների կողմից, որոնք օրէնքի խստութիւնը միայն հասարակութեան պահելով՝ իրենք իրենց շահերի ու տրամադրութիւնների ապահովութեան համար ներկայանում են անվախ, կատարելու ու իրօք պատժ արժանի օրինականացներ, մտածելով որ միամիտ հասարակութիւնը օրինականացութիւն համարելով ու վախճալով օրէնքի խստութիւնից, չը պէտք է համարձակի օրինականաց վարիչների դէմ ըմբոստանալ:

Այսպիսի պարագայում հասարակութիւնը կամ անհատները ոչ թէ ըմբոստանում են օրէնքների դէմ, այլ վարիչների եւ նրանց հետեւում են իրենց հասարակութեան ցանկութեամբ ստացված և օրէնքով ապահովված զեկավարիչ կացութիւնից: Օրինակ եթէ Պրահայի կամ Զուրիցերիոյ նախագահները օրէնքի տրամադրութեանց հիման վրա ընտրված են երկրի պետեր եւ նրանց քաղաքական անձնաւորութիւնը, նոյնպէս օրէնքների հիման վրա, մինչեւ որոշ ժամանակի լրանալը, ապահովված է ամեն մի ոտնձգութեան դէմ, երբ ցոյց տան միապետական ձգտումներ, իրենց անսանձ կամայական վեհապետներ

ներկայացնել որոշեն, ի հարկէ հասարակապետական ձրածասցու և Զուրիցերիոյ առաջին պարտականութիւնը կը լինի, ինչ միջոցով որ էլ լինի, տապալել այդ նախագահներին, բոլորովին ոտքի տակ տալով այն օրէնքը որ ստեղծված է նախագահների դիրքը անխախտ պահելու համար:

Այս բացատրութիւնից պարզ է որ թէ հնացած և ժամանակի ըմբռնումներին հակառակ օրէնքների եւ թէ յարմար, յառաջդիմական օրէնքները իրենց քմահաճոյքներին ծառայեցնող վարիչների դէմ եղած ըմբոստութիւնը ոչ օրինականացութիւն և ոչ էլ հայրենիքի ու հասարակութեան շահերի դէմ վնասակար է. ընդհակառակը նա միակ ոգ տակար ձեւն է և անհրաժեշտ, որովհետեւ այդ ըմբոստութիւններով հայրենիքը առաջին պարագայում ազատվում է անպէտք վնասակար, երկրի ու ժողովրդի յառաջդիմութիւնը կասեցնող օրէնքներից, երկրորդ պարագայում անշնորհ, կամայական ժամանակի պահանջները, հայրենիքի իրական շահերը չըմբռնող և ժողովրդի գլխին խոշոր կատաստրօֆների համար դռներ բացող շէֆերից:

ՎԱՐԴՈ

ԲԱՅ ՆԱՍԱԿ

ԲԱՔԻԻ ՆԱԶԱՆԳԱՊԵՏ ԻՇԽԱՆ ՆԱԿԱՇԻԶԷԻՆ (')

Ամբողջ Ռուսիան, ամբողջ աշխարհը սարսափից ցնցվեց, երբ իմացվեցին Բաքուում փետրվար 6-9 տեղի ունեցած անցքերը:

Ռուսիան որոնում եւ չէ կարողանում գտնել այդ դժբախտութեանց յանցաւորին, Յանցաւորին ճանաչողի պարտականութիւնն է մատնանշել նրան, բացարձակօրէն, յանցաւորին թագցնողի դերից ազատվելու համար: Ես ճանաչում յանցաւորին եւ պարտականութիւնս եմ համարում առանց ո եւ է տատանում անունը սալ: Կոտորածի յանցաւորը դուք էք:

Ահա հիմերը որոնց վրայ ես կողմում եմ այս մեղադրականը և յանձն առնում ապացուցել:

1 Բոլոր ոտնձգողները, զինուորները, կազակները, երբ նրանց խնդրում էին փրկել կոտորվողներին, անփոփոջ եւ միաձայն կրկրում էին՝ «մեզ հրամայված չէ»: Սրանցից շատերը անձնապէս գոյություն էին զուտ որ բռնադատված էին անգործութեան դատապարտվել եւ զենքերը ձեռքում լուռ հանդիսատես մնալ անմեղների կոտորածին:

2 Դուք եւ ձեր օգնական ոտնձգողները Գեորգի Ռոմանովի, բաղձաթիւ թիկնապահներով շրջելով քաղաքի վանազան կողմերում, փոխանակ աւերիչներին ցրվելու, զիտամար հեռանում էիք նրանցից, ուրիշ տեղ շտապել կեղծելով, որպէսզի մարդասպաններին միջոց տաք իրենց արեւալի գործը աւարտելու համար: Մինչդեռ ապացուցված է որ երկու կազակի կամ թէ հինգ զինված հայերի երեւումը բաւական եղաւ մարդասպաններին փախցնելու համար:

3 Դուք ձեռքից ետ էիք մղում փրկուիթեան օգնութիւն ազնարողներին եւ երբ Լարսեւը եւ ուրիշները ձեր մօտից անմիջապէս հրճանքով կարծես էին թէ փրկված են, դուք նրանց վրայ յարձակվում էիք նախապէս զինուած սուտ մեղադրանքով՝ իբր թէ նրանք հրազէն պարպելով վրէժխնդրութեան են մղում:

4 Դուք ձեր շքամբով մերձենում էիք աւերիչներին քաղցրաբար զրուցում նրանց հետ, յաճախ հրամայում կազակներին սխալմամբ նրանցից խլած զենքերը վերադարձնել:

5 Դուք հրաժարվում էիք զինուորական իշխանութեանց գրաւոր սուտ վարկութիւն անել զենքի դիմելու և գոհանում էիք բերանացի կարգադրութիւններով, համզված լինելով որ ձեր խօսքին չեն հաւատայ: Այս չափը բաւ է ձեզ համարելու ոչ միայն ոճիրի թոյլատրիչ այլ եւ մարդասպանների աջակից ու ձեր Բաքուի մէջ բարձր դիրքը աչրի առնելով, որ զին այդ դեռ չլսված կործանումի: Կայէն, ի՞նչ արիք դու եղբայրներդ, Բայց դուք իբր վախկոտ միշտ ստում էիք՝ կեղծում էիք յայտարարելով որ դործելու համար գոհացուցիչ ուժ չունէք, ժողովրդին խտրելով որ դուք հրամայել էք զենքով զսպել, մինչեւ անգամ թափում էիք եւ կոկորդիլոսի արցունքներ:

Դուք նոյնիսկ չամաչեցիք փորձ անել խաբելու հասարակութիւնը իբր թէ պաշտօնապէս խնդրելով որ գործը հրապարակով եւ հասարակութեան

ներկայացուցիչների ներկայութեամբ քննվի, շատ էւ համոզված լինելով որ այդ սեռակ դատարան չեն տայ ձեզ:

Ձեր մեղադրանքները Գեորգի Ռոմանովի, Գեորգի Ռոմանովի և Գեորգի Ռոմանովի ոճրագործութիւնից յետոյ, որում իրանք երկրորդական դեր էին խաղացել, մարդկանց աչքերի մէջ նայել, նրանք գնացին: Դուք մնացիք Բաքուում, Դուք գրվախառ ոճրագործ, դուք ընդունում մարդկանց, դուք խորհուրդներ էք կազմում: Դուք կայէնից վատ էք որովհետեւ կայէնը սպանեց իր մէկ եղբորը, իսկ դուք ձեր ձեռքերը ներկեցիք ձեր հարեւոր ու եղբայրների արնով: Կայէնը ինքը անձամբ սպանեց Արշիւն, իսկ դուք օգտուելով ձեր հեղինակութիւնից մեղքի մէջ խոթեցիք բաղձաթիւ թիկնապահների, որոք երկար ժամանակ պէտք է տանջվին իր ճանաչողութիւնից:

Կայէնի Արշիւն սպանութիւնը շոշափեց յետագայ սերունդին, իսկ դուք ջանացիք շատ սերունդների մէջ Բաքուում բարեկամարար ապրող ցեղերի, ցանել ատելութեան սերեր:

Եւ միայն այդ ցեղերի լրջախոնութիւնը պէտք է կարողանայ խորտակել ձեր զրուցի մրայրները: Դուք Յուդայից էլ վատ էք: Յուդան սարսափելի գործը կատարելուց յետոյ զղջաց եւ ինքզինքը խեղդեց, իսկ դուք կարծիք էք համարում ապրել ձեր այդ բոլոր կատարածներից յետոյ: Դուք արտաուորեցիք հրաշալի վրաստանը, որը ձեզ իր զաւակն է համարում: Դուք արտաուորեցիք Ռուսիան, որի դէմ կարող են գեղոհել թէ առժողովրդ եւ թէ անգիտակից ոճրագործները կարծեւով որ ձեր եւ Ռուսիոյ միջեւ ընդհանուր կապ կայ:

Թող ձեր անունը զգուցի լինի յաւիտենապէս:

Ա. Կ. Կուսնա Նովիկով

Յ. Գ. Խնդրում եմ այս նամակը տարածել իմ ստորագրութեամբ թէ ռուսներն եւ թէ տեղական լեզուներով:

Բաքու

Մ. Խ Սոյն նամակի ռուսերէն ընկերը սեռէք երբորդ ԼՂում:



Открытое письмо Вакинско му губернатору, князю Накашидзе.

Вся Россия, весь мир содрогнулись от ужаса, когда узнали про события 6-9 Февраля в Баку.

Россия ищет и не может найти, кто виноват в бедствии. Долг того кто знает виновника указать на него открыто. иначе он сдѣлается его укрывателем. Я его знаю и считаю своей обязанностью без обвинков назвать его. Виновник рѣзни — Вы.

Вотъ основанія, на которыхъ я возвожу это обвиненіе, которое беру съ доказателствомъ.

1) Всеѣ полицейскіе, солдаты, казаки, когда ихъ просили спасти погибающихъ, неизвѣнно въ одинъ голосъ отвѣчали: „намъ не велѣно!“ Нѣкоторые изъ нихъ сами негодовали, что принуждены бездѣйствовать и съ оружіемъ въ рукахъ смотрѣть, какъ избиваютъ невинныхъ.

2) Вы и Вашъ помощникъ, полицеймейстеръ Демицкий съ многочисленной охраной казаковъ разъѣзжали по городу и, вмѣсто того, чшобы разгонять громиль, нарочно уѣзжали, какъ бы торопясь въ другое мѣсто, чшобы дать убійцамъ довершить свое кровавое дѣло. Между тѣмъ доказано, чшо появленіе двухъ казаковъ, или пяти вооруженныхъ армянъ было достаточно, чшобы уби разбѣжались.

3) Вы отгалкивали взывавшихъ къ Вамъ о спасеніи и, когда Далаевъ и

другіе при вашемъ приближеніи съ восторгомъ думали, что спасены, Вы на нихъ же набрасывали съ завѣдомо ложнымъ обвиненіемъ, что они стрѣляютъ и тѣмъ вызываютъ месть.

4) Вы съ Вашей свитой подѣзжали къ громиламъ, ласково съ ними разговаривали, а иногда даже приказывали возвращать имъ оружіе, по ошибкѣ отобраное у нихъ казаками.

5) Вы отказывались давамъ письменныя предложенія военнымъ властямъ прибѣгать къ оружію и ограничивались словеснымъ распоряженіемъ, зная что Вамъ не повѣрятъ на слово. У того достаточно, чшобы считать Васъ не только попустителемъ преступленія, но и пособникомъ убійцы, а при Вашемъ высокомъ положеніи въ Баку и душою этого не слышавшаго погрома. Каинъ, что ты съ'лалъ съ братьями твоими? Но какъ трусъ, Вы все время лгали, притворялись, что у Васъ нѣтъ достаточныхъ силъ, чшобы дѣйствовать, обманывая общество, что Вы дали приказъ пустить въ ходъ оружіе, проливая даже иногда крокодильи елезы.

Вы не погнушались сдѣлать попытку обмануть общество, какъ будто представивъ официальную просьбу о гласномъ разслѣдованіи дѣла въ присутствіи представителей общества, хорошо зная, что такого суда Вы не получите.

Ваши сообщники, Демицкий Ха-

мидий, Бородинъ лучше Васъ. Имъ стало совѣстно смотрѣть людямъ въ глаза послѣ преступленія, въ которомъ они играли лишь второстепенную роль. Они ушли. Вы остались въ Баку. Вы — главный преступникъ. Вы принимаете людей, Вы созываете совѣщанія. — Вы хуже Каина, ибо Каинъ убилъ одного брата, а Вы обагрили Ваши руки въ крови сотенъ невинныхъ братьевъ. Каинъ убилъ Авеля самъ, а Вы, пользуясь Вашимъ авторитетомъ, ввели въ грѣхъ многихъ несчастныхъ, чшобы долго будутъ мучиться угрызениями совѣсти. Каинъ убилъ Авеля, и возмущенъ слѣдующихъ поколѣній, а Вы постарались на многія поколѣнія посѣять сѣмена вражды между дружественными народностями живущими въ Баку. И лишь благородіе ихъ можетъ разстроить Ваши гнусныя планы. Вы хуже Иуды, ибо Иуда, совершивъ ужасное дѣло, раскаялся, потое и удавился, а Вы находите возможнымъ жить послѣ всею Вами сдѣяннаго. Вы озорили чудную Грузію, считавшую Васъ своимъ сыномъ. Вы озорили Россію, противъ которой могутъ возроптать и пострадавшіе и безсознательные преступники, думая что между Вами и Россіей, есть что либо общее. Да будетъ Ваше имя презрѣнно на вѣки.

АЛЕКСАНДРЪ НОВИКОВЪ

Прошу это письмо распространять

за моею подписью по русски и на мѣстныхъ языкахъ. (*)

Ինչ որ Այս օրոցումը որի թարգմանությունը գտնում ենք այն համարի մէջ մեզ զրկված է Ռուսից երկու լեզուներով էլ ապագրելու համար. Ռուսերէն լեզուով գրառւմները շարունակուելու եւ պակաս տասեր լինելով մի ակամա թեթեւ սխալներ են ապրտել. խնդրում ենք հեղինակի եւ ընթերցողների ներողամտութիւնը:

ՆՈՐ ԿՈՏՈՐՈՒՄ
ՌՈՒՍԱԿԱՆ ԼԵՂԱՍԱՆԿԻՄ
—)o(—

Սարսափելի դրամայի նախաբանը որ եղաւ նոյեմբերի 13ին Գրիգորովի հրապարակի սպանողարար այսօր շարունակվում է Վարչապետի փողոցներում: Երկար ժամանակից ի վեր լեհական պրոլետարը պատրաստվում էր տանելու միջազգային մայրս 1ի տօը: Հակառակ 60000 սերերի հարկների կենտրոնացման մայրաքաղաքի մէջ: Տոնախմբութեան կողմակիցի շնորհ օրոշել էին մի ակնածելի բայց խաղաղ ցոյց անել: Երազրված էր առաջուց գործաւորական տմբար ցրվել քաղաքի բոլոր թաղերում եւ վերջի մի նշանով ամբողջին հաւաքել քաղաքի կենտրոնում եւ թափարներ կազմել:

Արդեօք ստիկանութիւնը տեղեկութիւն ունէ՞ր այս մասին, թէ ծրագրերը մեծ դժարութիւններ էր ներկայացնում, դեռ

Ա. ԱՄՖՆՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ Պ. ՎԼՈՎ Ա

(Տոնախմբութիւն)

Գրադէտի յիշողութիւններից: Ամբողջ արկածներ բաւական սուրբիմակ հասարակութեան մէջ

Թարգմ. ուսուցիչից) 26

Ճար. 707, 7 ք/ն հն)

Բուրուներ գլուխը թափանցելով առարկեց. — Այնքան զարմացրեց Վալէնտինի զուք դասել չէք կարող. դուք սխալվում էք. եթէ դուք իկտորիայի մասին գիտնայիք այն, ինչ որ ես գիտեմ... Այնպիսի մի անպիտանն է. այնպիսի մի արարած. նրանից անէն քան կարելի է սպասել... — Ժամէ ժամ աւելի խնդրեք ծանրանում է: Աէկ զիցուհի է. թագուհի, առանց նրան ապրել չէք կարող մէկ էլ անպէտք արարած... Այդ ինչ շուտով ձեզ մտ փոխվում է վրաբերի ես: Բուրուներ ձեռքս սեղմելով թոթո վեց. — Այո, այո... այդ աէնն էլ կայ:

Թէ դիցուհի է, թէ թագուհի, թէ անպէտք, աղտոտ արարած... Բայց եթէ այդպէս է ինչի է կուսակրօն վիստա ներկայանում. ինչ իրաւունք ունի կեղծաւորելու, ծաղրելու, թող ամէն ինչ բացարձակ պարզ լինի. հասարակութիւնը չէ խաբէ... Ես ոչինչ չէի հասկանում. ցանկանում էի որ շուտով դժբախտ ձեռքս ազատ թողնէր եւ հեռանար. — Է՛հ, առաւօտը երեկոյից իմատարի է. վերջապէս յայտնեց, ներեցէք ի՛նչ բոլոր այս վայրենի տեսարանների համար. Մնաք բարով: Առաւօտեան ես ուշ արթնեցի եւ պարտէզ դուրս եկայ թէյ խմելու: Բուրուներ եւ Աֆանասիը տաք տաք վիճում էին: Աֆանասիը երեկվան արեցողութիւնից եւ վախից սարսափելի ճնշված շարած կերպարանք ունէր. — Ձեմ հաւատում, մտնում է Բուրուներ եւ բուրնցքով սեղանին խք փում: Իսկ կարմրաքիթ Աֆանասիը պաղատում է — Այնքան Այնքան ինչ, թողէք, ինչ հաճուք կա՞յ. բարի եղէք վերջ տալու: — Ո՞ր գիրը ինչու՞նի է, պարտեներ, էլի ինչ փոթորիկ է: Բուրուներ չը պատասխանեց, իսկ Աֆանասիը կպաւ ինձ, ինչպէս փրկարար խորհուրի: — Գթացէք, Այնքան զար Վալէնտինովի, ամբողջ զիշերը չէ քնացել եւ ով գիտէ վատից ինչեր է մտածել:

Կրկին հին երգն է երգում. իբր թէ երէկ վիկտորիան մեզ խաբեց շատ ճարպիկորէն. իբր թէ նրա մտ Արինան չէ կղել ամենեւին, այլ մի անծանօթ մարդ, որից Բուրուներ եւ ես վշտանար ենք լինում: — Որչափ մեծ յիմարութիւն է այդ բարկութեամբ գոչեցի ես, Բուրուներ, նա վայրենացած աչքերը յառեց ինձ վրա եւ դանդաղութեամբ ասեց. — Աֆանասիը մենք քեզ հետ միասին փախոց եւ ծիծաղի ձայն լսեցինք: — Լսեցինք: — Համբոյրներ ձայն: — Պերել յեմ համարձակվում, բայց կարծես թէ... — Արեւին, ձեր կարծիքով Արինայի հետ էր համարուվում վիկտորիան, առարկեցի ես. կարելի է որ Արինան գնալու պատճառով օրիորդի ձեռքն էր համբուրում, եւ ահա մէնը... Բուրուներ գլուխը օրորեց, պատասխանելով. — Այ, ոչ եւ ոչ, այդպէս չէ: Թողէք Այնքան զար Վալէնտինովի. մի պայտպանեցէք. նրանք մեր քիթերից բռնած մեզ վարում են: — Ո՞վ — Եւ վիկտորիան եւ Արինան. ես այդ կարողութիւնն այսօր չը կրցայ խօսեցնելու համար ձեռք ձգել. իսկ վանիչկան յիմարի յիմարն է ներկայանում: Ինչ որ ակնարկում եմ, ոչինչ չէ հասկանում, Պարզ է որ գաղտնիքին տեղեկ չէ, ինչպէս երեւում

է մայրը մենակ է միջնորդութիւն անում: — Կիսախենթ ես դու, այ ինչ: — Այ. դուք ոչինչ չը գիտէք, իսկ ես գիտեմ: Եւ եթէ գիտնայիք ի՞նչ գիտցածը Աֆանասիի, գիտցածը... այդ աղտոտին այդպէս չէիք պայտպանել... Աֆանասիը դէմքում յանկարծ երեւաց սարսափի խիստ արտայայտութիւն. նա առաջ ընկաւ դէպի Բուրուներ եւ թոթովեց. — Այնքան Այնքան ինչ, եթէ այնքան բարի լինէիք, որ այդ մասին ակնարկ չանէիք: Բուրուներ նայեց նրան կատաղի արհամարանքով եւ որոտաց. — Իսկ դու լա/ր, քեզ հարցնող չը կայ: Այդպիսի քաղցր խօսակցութեան մէջ գտաւ մեզ վիկտորիան: Արինան էլ խորատանկ եւ մտայլ դէմքով հետեւում էր նրան: Մինչեւ օրս ես ընթերցողին չէի ծանօթացրել վիկտորիայի կերպարանքի հետ. նա թուխ է, բարձրահասակ, կարելի է ասել մի քիչ էլ ձանր կազմվածքով Ձեռքերն ու ոտքերը գեղեցիկ ձեւ ունեն. բայց փոքր չէ կարելի ասել, իրանը ձկու է, գրասիչ, բայց անձնիքը վիզը եւ ուսերը զանգւածային, այնպէս որ երբեմն կարծվում է թէ վիկտորիայի խոշոր մարմին վրա տեղաւորված է մի ուրիշ փոքրիկ եւ շատ գեղեցիկ զուլար: Դէմքի գծագրութիւնը բաւական կանոնաւոր է, բայց մի քիչ

որոշակաւ յայտնի չէ : Իրողութիւնը այն է որ առաջուց զին տրական մեծաքանակ խմբերով շրջապատեցին գործաւորական թաղերը : Գործաւորական թաղերը, բազմապատ հազարաւոր մարդկանցից, իրենց կանանց և երեխաներով միասին, առանց զէնքի, ուզելով անցնել քաղաքի կենտրոնը յեղափոխական երգեր երգելով և կարմիր դրոշակներ ծածանելով կանգ առաւ զօրքերի ստիպումով : Երան հետեւեց վաղրենի և բարբարոսական մի տեսարան : Բանաւորների կողմից առանց ունէ գրգռապատճառի հեծելազօրքը և պարզ զինուորները գրոհ տուին ամբոխի վրա : Հրազենները պարպկեցին այր մարդկանց, կանանց և երեխաների վրա : Զարկում էին և փախչողներին, որին ապացոյց կտրող են ծառայել փախչողներին մէջքերում եղած վէրքերը : Հեծելազօրքը հրազենէր պարպում նրանց վրա, որոնք փախչել չէին կարողանում, հրացանների կոթերը, նագայկաները աւերում էին ստեղծում կանանց և երեխաների միջեւ :

Այս տեսակ գործողութիւններ կատարվել են Զլոտա, Ռոնոօվա, Երուսաղէմսկայա փողոցներում և Վիտովսկի հրապարակի վրա : Վօլա արարածանում մի պահակախումբ սպանել է մի ուսանողի, որը կոչեր է ցրել իսկ եղել Զլոտա և Սոսնովա փողոցների անկ-

խում մի թագնաված մարդ հրազեն է պարպում անցնող պահակախմբի ետեւից, զինուորները բոլորը միասին կրակում են ան-ճիշտ ամբոխի վրա և 20ի չափ մարդիկ սպանում և վիրաւորում : Ժողովրդի կտտաղութեան չափը անցնելը իշխանութեանց վայրենութեան հանդէպ անմիջապէս զգալի եղաւ :

Նոյն երեկոյին ժամը 11ի մօտ Վիեննայի կայարանի մօտի փողոցներէ մէկում ումբ նետեցին մի պահակախմբի վրա, երեք կազակ եւ մի ոստիկան սպանվեցին և երեք մասնաւոր մարդիկ վիրաւորվեցին : Զինուորներն ի պատասխան ումբի հրացան են պարպում և սպանում ու վիրաւորում մի քանի անցորդների : Գիտար է ճշգրիտ որոշել զոհերի թիւը :

Ոստիկանները եւ բժշկական հաստատութեանց տեղեկութիւնները հիման վրա սպանվածները թիւը 600ի է հասնում իսկ վիրաւորները 200ի : Այս թիւը միայն մօտաւորապէս ճիշդ է, որովհետեւ շատ վիրաւորներ իրենց տանքում են խնամվում :

Այս բոլոր իրողութիւնները եւ ձեզ հաղորդում եմ վերապահութեամբ :

Շատ դժուար է սարսափից եւ սուգից մեռած մի քաղաքում ամեն բան գիտնալ և ստուգել : Սայտի է նաեւ որ ոչ պակաս ծանր դէպքեր պատահել են Լոտ-

պում, ու կայրում, մատնանշում են արիւնոտ ընդհարումներ որոնք տեղի են ունեցել Լոտզի ցուցադրանքի և զինուորների միջեւ : Շատ սպանված և վիրաւորվածներ կան :

Այս դէպքերից յետոյ Սոցիալիստների կազմակերպութիւնը որոշել է ընդհանուր գործաթող անել անմիջապէս : Ուստի յիշատակութեանը մի նոր գրոհ է որ պատրաստվում է :

Այս խտուրտութիւնների պատասխանատուութիւնը միայն ընկնում է Վարչապետի նոր նահանգապետի վրա :

Մայիս 1ին զենեքալ Մաքսիմովիչը վերջնապէս իր անուշ ժպտով դիմակը նետեց ու երեւաց շարագուշ պոռոտախօսի «բարեկամ» դէմքով :

Պատմում են որ խել են մի քանի կարմիր դրոշակներ :

Այս հերոսները պէտք է միութեամբ կանանց և երեխանց արիւնով ծածկված այդ լաթի կտորներով որոնք կազմելու են անշուշտօրի և Գիտանութեամբ զարգացրված յաղթանշանները :
ՎԵՐՆԵՑ
Լը կուրիէ էօրօպէէն

րինակ բան—բաւ : Թէեւ մենք որոնք Թէհրանցիներս լսել էինք որ Եւրոպայում ներկայացուցներ իւրեկոյիները, օպերաների եւ այլն հետ միասին բախեր էլ են արոււմ, բայց հաւատացնում եմ մեզինց չատերը չգիտէին ինչ է իսկապէս քալի էութիւնը, եւ ահա վրայ հասաւ յիշատակուած օրը եւ ամենքիս աչքի զգացումները, խանդի ու յափշտակութեան առաջ հայկական թասերաւորանում ձգուեցաւ բալի պատկերը, սքանչելի երեւոյթ խաւարաւոր կենքում . . .

Բաւ տալու գեղեցիկ միտքը իսկապէս յղացել են տեղացի երկու օրիորդներ Ն. Ամիրխանեան և Թ. Գալուստեան, առաջինը Պարզ շրջագայած իսկ երկրորդը Վիեննայում ապրած : Մի կողմից յուսաւոր Եւրոպայի կեանք վարելու տենչը, միւս կողմից խուլ Թէհրանում յուսաւոր հայեացքների պիտելը ինչու շատապատուութիւնը եւ երբեք հզորաց ազգային դպրոցների նիւթապէս սուղ վիճակի մէջ լինելը ստիպում են յիշեալ օրիորդներին գործի գլուխ անցնել, սիրողներ համախմբել իրենց շուրջը եւ մեր չի տեսած մեր աչքի առաջ պարզել, մեր չիմացածը մեզ սորվեցնել :

Ասիական յետաձուլ հայեացքների մի անկիւնում, ինչպիսիք է Թէհրանը ուր գեղեցիկ սեռի նային անգամ մահացու մեղք է համարվում, կրկնում ենք, այնպիսի մի վայրում անձանթ երիտասարդների հետ ձեռք ձեռքի սուած պարելը իսկապէս որ քաղաքործութիւն է յիշեալ օրիորդների կողմից, Դուք չգիտէք թէ ի՞նչ լուտանքներ պիտի չպատուեն նրանց հասցէին սգէտ ու ռամկ ամբօխի կողմից, որոնց դիմաւայու համար սողուեցութիւն և համբերութիւն ենք

կուպիտ, եւ հրապուրանք ոչ թէ գրծերի մէջ է, այլ դեղին սաթի փայլվածք ունեցող բուրբաղոյն մորթի գոյները, սուր կերպով որոշվող վարդագոյն շրթունքների կազմած կէպտի մէջ, որի ետեւից, ժպտած միջոգին փայլում են զարմանալի ձերմակութեամբ եւ կանոնաւոր ատամները, այտերի վրա գտնված թոթոռուն փոսիկների, զարչնաղոյն փայլուն մեծ աչքերի եւ տիրապետող մութ կանոնաւոր բարակ յոնքերի սլացքի :

Նա սեղանին մտեցաւ շատ ուղիղ, հպարտօրէն զէմբ բարձր բռնած, մի քիչ դժգոյն սովորականից, ձախ յոնքը անհանգստութեամբ ցնցվում էր աչքի վրայ, ու ունեցնէր գողողոււմ կին, նա ամէնքին շոր բարեւ տեւց եւ միայն ինձ ձեռք մեկնեց, նստեց ու սկսեց, ցուրտ եւ չբարիք խոստացող ձայնով :

— Ես շատ շնորհակալ եմ ձեզինց, Ալէքսէյ Ալէքսէյիչ, որ դուք պարտականութիւն էք ստանձնել գիշերները իմ ննջարանի գուռը հսկել : Բայց ուրիշ անգամ, խնդրում եմ ձեզինց որ այդ գուռը թիւնը յանձն չառնէք : Ես չեմ ուզում որ դուք քնից, մարդուն տրուած ամենաբարեւոր պարգեւից զրկուէք : Գուռը շատ օգտակար բան է, մանաւանդ հարբած մարդկանց համար, որոնք չեն կարողանում ինքզինքնին կառավարել :

Ոչ լրտեսներին եւ ոչ էլ լրտեսութեան կարող եմ հանգուրթել, եւ ոչ

ոքի էլ իրաւունք չեմ տալիս որ ինձ հետեւեն : Գուք ոչ իմ ամուսինս էք, ոչ եղբայրս եւ ոչ էլ սիրելիսս : Դուք երէկ իմ վերաբերմամբ խեղարկիչի, ոչ կարգին մտորում պէս պահեցիք ձեզ, եւ դեռ այս անկամք թշուա ապուշին էլ, զլխով ցոյց տալով Աֆանասիչը, հրապուրեցիք ձեր արտոտ խաղի մէջ . . . Ես երբէք ոչ ոքին իմ տանից դուրս չեմ արել, թէեւ դուք դրան արժանի էք : Յուսով եմ որ դուք ինքներդ ամաչում էք ձեր արածից, որ այդ անմտութիւնը ձեզ հանդիպել է առաջին եւ վերջին անգամ եւ էլ այդ տեսակ տեսարաններ չեն կրկնվի . . .

Բուրուներ ակամջ դրեց շարագուշակ հանգստութեամբ : Նրա թուխ դէմքը դեղնեց եւ աչքերի, մէջ փայլեցին անխնայ եւ ցուրտ շարութեան բոցեր :

— Ներեցէք ինձ, Վիկտորիա Պավլովնա, եւ նրա շինծու բարեկամական շարժանց ազատ ձայնը մատնեցին որ նա շատ լաւ եւ անհաճոյ թշնամանքով է տիրապետում զինքը, իր լսած վիրաւորական խօսքերի հանդէպ : Ներեցէք, ես ի հարկէ անասուն եմ, ազուշ, բայց հիմա ապուրթիւնս անցաւ եւ Աստուած վկայ էլ չեմ անի :

— Շատ ուրախ եմ :

— Իսկ որ ինձ տնից չէք վռնտում, զրա համար էլ մեծ շնորհակալութիւն, ճիշդ է, կասեմ : Բայց այսուհետեւ կաշխատեմ իմ անձօփս ձեզ չը լսանգործել : Դուք ինձ էլ չէք տես

նի : շարունակ շրջականերում պիտի թափառեմ փորձանկարներ պատրաստելու . . .

— Եւ շատ լաւ : գործով զբաղվեցէք : յիմարութիւնները էլ գլուխդ չեն մտնի :

Բուրուներ կծու կերպով ժպտաց շարունակելով :

— Ի հարկէ, ի հարկէ . . . Այո, ես արդէն փորձ սկսել եմ . . .

— Այո, յիշում եմ, այս օրերում ինձ անցիք, անփոյթ կերպով նկատեց Վիկտորիան, ոչ առանց ճիգերի բարկացող խօսակցութեան եղանակը վերածելով սովորական բարեկամական խօսակցութեան : Ինչ որ առասպելական բան :

Բուրուներ լռեց, մատներով սեղանին խփելով :

— Սատիբի եւ յաւերժահարսի մասին է՞ք ասում, առարկեց Բուրուներ վերջապէս շինծու եւ կարծես իրր պարզամտութեամբ : Ոչ այդ թողի, այդ մտքից ձեռք քաշեցի : Հիմա չէ՞ որ այդ հին ժամանակների պէս չեն նկարում : Այժմ կենդանի օրինակ պէտք է, բաց օդի մէջ որպէս զի հասարակութիւնը տեսնէ թէ իրականից է նկարված : Եւ համաձայնեցէք որ այստեղ այդտեսակ նկարների համար կենդանի օրինակներ չըկան . . . Եւ եթէ գտնվեն էլ, արդեօք կը հաճին : Այ դուք մեծեցիք : Ես քիչ մնաց որ վշտանայի, բայց հիմա տեսնում եմ որ իրաւունք ունէիք : Խեղացի եւ լրջախոհ գտնվեցիք :

Չա դժարութեամբ շունչ առաւ :

Մենք սպասողական եւ վարանոց դրութեան մէջ էինք թէ մարդ խօսքը ուր պէտք է հասցնէ, ինչի է ձա՞մբու վում :

Նա շարունակեց :

— Էհ, մենք ո՞ր Բէկիւնը տը : Ես պարզ մի փոքրիկ նիթ եմ վերցրել : Կանգ առաւ, հազաց, եւ յանկարծ աչքերը մղելով Վիկտորիայի վրայ, լի վախկոտ, բայց յուսահատ կատաղութեամբ, բարձրաձայն եւ որոշ կերպով արտաստեց :

— Ինչպիսիք . . . մանկական զըլխիկ . . . այո . . . այստեղ մօտիկ նախիժին գիւղի Տանուտը Միքոյնիկովի աղջկանից, նկարեցի . . . սիրողովի աղջիկ է . . . չիկահեր, մէջիա են կոչում . . . դուք նրան երբէք չէք տեսնո՞ւ Վիկտորիա Պավլովնա :

Այս խօսքերի վրայ Սիմոնայի արիւնը երեսը թաւաւ, ցւ ձեռքերով ազգրերին խփելով ծվաց :

— Այ դու ստոր հոգի, մարիկս, ես չէի ասում ձեզ :

Իսկ Աֆանասիչի երեսը կանանչ գոյն ստացաւ, ինչ որ վայրենու պէս փնչաց, եւ թէլով բոժակը ձեռքից վար ընկաւ ու փչրավից :

Բուրուներ նայում էր Արիւնային եւ Վիկտորիային հպարտ եւ չափազանց յաղթանակով, եւ նոյն ժամանակ լիովին յուսահատ և կարծես թէ անզուէնգ էր թողում . . .

(Շարունակելի)

